ԵՎՐՈՊԱԿԱՆ

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Բրյուսել, 16.3.2015

C(2015) 1585 final

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 1-5

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հանձնաժողովի կիրառած որոշումների մասին

որոնցով սահմանվում է այն հիմնավորող փաստաթղթերի ցանկը, որոնք վիզայի դիմորդները պետք է ներկայացնեն Անգոլայում, Հայաստանում, Ադրբեջանում, Կուբայում և Պաղեստինում

ՀԱՎԵԼՎԱԾ II

Հայաստանում վիզայի դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԲՈԼՈՐ ՎԻԶԱՅԻ ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Ավիատոմսի ամրագրում

2. Կացության վայրի մասին ապացույց (օրինակ՝ հյուրանոցի ամրագրում)

3. Դիմորդի Հայաստանում ունեցած տնտեսական ու սոցիալական կապերի, ինչպես նաև նախատեսված այցի համար անհրաժեշտ բավարար ֆինանսական միջոցների մասին ապացույց

– աշխատանքի տեղեկանք աշխատավարձի մասին նշումով, տրված ոչ ուշ քան մեկ ամիս առաջ

– վերջին երեք ամիսների բանկային քաղվածք

– գույքի սեփականության ապացույց (մեքենա, բնակարան կամ այլ անշարժ գույք)

4. Հայաստանի քաղաքացիություն չունեցող անձանց համար. Հայաստանում օրինական բնակության մասին ապացույց (կացության քարտ), որը վավեր կլինի անդամ պետությունների տարածքից դուրս գալուց հետո առնվազն 3 ամսվա ընթացքում

5. Անչափահասներ, ովքեր ճանապարհորդում են առանց ծնողների կամ մեկ ծնողի հետ

– ծննդյան վկայական

– ծնողների ամուսնության վկայական

– ծնողի կամ օրինական խնամակալի համաձայնությունը միայն այն դեպքում, եթե անչափահասը ճանապարհորդում է միայնակ կամ միայն մեկ ծնողի հետ

II. ՀԱՏՈՒԿ ՊԱՀԱՆՋՆԵՐ ԸՍՏ ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԻ

1. Զբոսաշրջություն

– կացության վայրի մասին ապացույց բոլոր այցելվող անդամ պետություններում, եթե դիմորդը մտադիր է այցելել մի քանի անդամ պետություններ

2. Գործնական այց

– հրավիրող ընկերության / իրավաբանական անձի / անդամ պետության մասնաճյուղի կողմից հրավեր

– հրավերում պետք է նշվի, թե արդյոք կացության վայրը տրամադրում է հրավիրող կողմը, եթե այն չի տրամադրում հրավիրող կողմը, ապա անհրաժեշտ է հյուրանոցի ամրագրում

– հրավերում պետք է նշվի, թե ով է հոգում կացության ծախսերը. եթե ծախսերը հոգում է դիմորդը, ապա անհրաժեշտ է նրա վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը

– անհատ ձեռնարկատերերի դեպքում անհրաժեշտ է դիմորդի ընկերության պետական ռեգիստրի վկայականը

3. Մասնավոր այցելություններ (այցելություն ազգականներին/ընկերներին)

– անդամ պետության իրավասու մարմինների կողմից վավերացված հրավերի/երաշխիքի ձևաթուղթ, որում նշված է, որ հրավիրող անձը/երաշխավորը ունի բավարար ֆինանսական միջոցներ: Որոշ անդամ պետություններ պահանջում են օգտագործել իրենց իսկ երկրի ձևաթուղթը (տեղեկատվությունը տրամադրվում է այն անդամ պետության կողմից, որը մտադիր եք այցելել)

1 Իտալիայի համար պետք է կցվեն Իտալիայի պետական գրանցամատյանի վկայականը, հրավերի նամակը և ստորագրող անձի անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

– հրավերի/հովանավորության ձևաթղթում պետք է նշված լինեն կացության վայրի մասին մանրամասները. եթե այն չի տրամադրում հրավիրող կողմը, ապա անհրաժեշտ է հյուրանոցի ամրագրում

– հրավերի/հովանավորության ձևաթղթում պետք է նշված լինի, թե ով է հոգում ծախսերը. եթե ծախսերը հոգում է դիմորդը, ապա անհրաժեշտ է նրա վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը

4. Մերձավոր ազգականներին այցելություն. ամուսիններ, երեխաներ (ներառյալ որդեգրված երեխաները), ծնողներ (ներառյալ օրինական խնամակալները), տատիկներ և պապիկներ, թոռներ, ովքեր այցելում են անդամ պետություններում օրինական բնակվող Հայաստանի քաղաքացիներին կամ Միության քաղաքացիներին, ովքեր բնակվում են այն անդամ պետության տարածքում, որի քաղաքացիներն են հանդիսանում

– իրավասու մարմինների կողմից վավերացված հրավեր, որում նշված է, որ հրավիրող կողմն ունի բավարար ֆինանսական միջոցներ կամ պաշտոնական պարտավորության նամակ

– հրավիրող անձի հետ ընտանեկան կապը հաստատող պաշտոնական փաստաթուղթ՝ այցելվող երկրում նրա օրինական բնակության վայրի ապացույցով

– հրավերի մեջ պետք է նշվեն կացության վայրի մասին մանրամասները. եթե այն չի տրամադրում հրավիրող կողմը, անհրաժեշտ է հյուրանոցի ամրագրում

– հրավերի մեջ պետք է նշված լինի, թե ով է հոգում ծախսերը. եթե ծախսերը հոգում է դիմորդը, ապա անհրաժեշտ է նրա վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը

5. Բժշկական նպատակներով ճանապարհորդություն (և ուղեկցողի հետ գնալու անհրաժեշտություն).

– բժշկական հաստատության պաշտոնական փաստաթուղթ, որում ներառված է տեղեկատվություն այդ հաստատությունում բժշկական օգնություն ստանալու, ուղեկցողի հետ գնալու անհրաժեշտության և բժշկական բուժման համար բավարար ֆինանսական միջոցների առկայության մասին

– պաշտոնական փաստաթղթում պետք է նշվեն կացության վայրի մասին մանրամասները. եթե դիմորդը չի մնում հիվանդանոցում, անհրաժեշտ է հյուրանոցի ամրագրում

6. Տարանցում.

– վիզա կամ այցելության երկիր մուտք գործելու թույլտվություն

7. Պաշտոնական պատվիրակությունների անդամները, այդ թվում՝ այդպիսի պատվիրակությունների մշտական անդամները, ովքեր Հայաստանին ուղղված պաշտոնական հրավերից հետո պետք է մասնակցեն հանդիպումների, խորհրդակցությունների, բանակցությունների կամ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև միջկառավարական կազմակերպությունների կողմից անդամ պետություններից մեկի տարածքում անցկացվող միջոցառումների.

– Հայաստանի իրավասու մարմնի կողմից տրված նամակ, որը հաստատում է, որ դիմորդը իր պատվիրակության անդամ է կամ՝ իր պատվիրակության մշտական

անդամ և մեկնում է վերոնշյալ միջոցառումներին մասնակցելու համար, ինչպես նաև պաշտոնական հրավերի պատճեն

– հրավերի մեջ պետք է նշվեն կացության վայրի մասին մանրամասները. եթե այն չի տրամադրվում միջոցառման կազմակերպչի կողմից, անհրաժեշտ է հյուրանոցի ամրագրում

– նամակում կամ պաշտոնական հրավերում պետք է նշվի, թե ով է հոգում ծախսերը. եթե ծախսերը հոգալու է դիմորդը, ապա պահանջվում է նրա վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը

8. Աշակերտներ, ուսանողներ, ասպիրանտներ և ուղեկցող ուսուցիչներ, ովքեր մեկնում են ուսման կամ վերապատրաստման նպատակով, այդ թվում՝ փոխանակման ծրագրերի, ինչպես նաև կրթությանն առնչվող այլ միջոցառումների շրջանակներում.

– համալսարանի, քոլեջի կամ դպրոցի գրավոր հայտ կամ ընդունելության նամակ, ուսանողական քարտեր կամ մասնակցության վկայականներ

– ընդունելության նամակում պետք է նշվեն կացության վայրի մասին մանրամասները. հակառակ դեպքում անհրաժեշտ է հյուրանոցի ամրագրում կամ կացության վայրի մասին այլ ապացույց

– հրավերում պետք է նշվի, թե ով է հոգում ծախսերը. եթե ծախսերը հոգալու է դիմորդը, ապա անհրաժեշտ է նրա վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը

9. Լրագրողներ և նրանց ուղեկցող տեխնիկական անձնակազմ.

– կազմակերպության կամ դիմորդի գործատուի կողմից տրված տեղեկանք կամ այլ փաստաթուղթ, որը հաստատում է, որ տվյալ անձը որակավորված լրագրող է և նրա ճանապարհորդության նպատակը լրագրողական աշխատանք կատարելն է կամ ապացուցում է, որ նա լրագրողին ուղեկցող տեխնիկական անձնակազմի անդամ է

– գործատուի կողմից տրված տեղեկանքում պետք է նշված լինի, թե ով է հոգում ծախսերը, եթե ծախսերը գործատուն է հոգում, ապա անհրաժեշտ է գործատուի վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը, եթե ծախսերը հոգում է դիմորդը, ապա անհրաժեշտ է նրա վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը

10. Միջազգային մարզական միջոցառումների մասնակիցներ և նրանց ուղեկցող անձինք.

– գրավոր հրավեր ընդունող կազմակերպության, իրավասու մարմինների, ազգային մարզական ֆեդերացիաների կամ անդամ պետության ազգային օլիմպիական կոմիտեների կողմից

– գրավոր հրավերում պետք է նշվեն կացության վայրի մասին մանրամասները. եթե կացության վայրը չի տրամադրվում միջոցառման կազմակերպչի կողմից, ապա պահանջվում է հյուրանոցի ամրագրում

– գրավոր հրավերում պետք է նշվի, թե ով է հոգում ծախսերը. եթե ծախսերը հոգում է միջոցառման կազմակերպիչը կամ ուղարկող կազմակերպությունը, ապա անհրաժեշտ է նրանց վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը

11. Միջազգային ցուցահանդեսներին, կոնֆերանսներին, սիմպոզիումներին, սեմինարներին կամ այլ նմանատիպ միջոցառումներին մասնակցող մասնագետներ.

– ընդունող կազմակերպության կողմից գրավոր հրավեր, որը հաստատում է, որ տվյալ անձը մասնակցում է միջոցառմանը

– հրավերի մեջ պետք է նշվեն կացության վայրի մասին մանրամասները. եթե այն չի տրամադրում հրավիրող կողմը, ապա անհրաժեշտ է հյուրանոցի ամրագրում

– հրավերի մեջ պետք է նշվի, թե ով է հոգում ծախսերը. եթե ծախսերը հոգում է դիմորդը, ապա անհրաժեշտ է նրա վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը

12. Քաղաքացիական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և անդամ պետություններում գրանցված հայկական համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից հրավիրված անձինք, ովքեր մեկնում են վերապատրաստման կամ սեմինարների և կոնֆերանսների մասնակցելու նպատակով, այդ թվում՝ փոխանակման ծրագրերի կամ համահայկական և համայնքային աջակցության ծրագրերի շրջանակներում.

– ընդունող կազմակերպության կողմից տրված գրավոր հրավեր կամ ապացույց այն մասին, որ անձը ներկայացնում է քաղաքացիական հասարակական կազմակերպություն կամ մասնակցում է համահայկական կամ համայնքային աջակցության միջոցառումներին, ինչպես նաև վկայական համապատասխան

գրանցամատյանից, որով պետական մարմինը հաստատում է նման կազմակերպության գոյությունը տվյալ երկրի օրենքին համաձայն

– հրավերի մեջ պետք է նշված լինեն կացության վայրի մասին մանրամասները. եթե այն չի տրամադրում հրավիրող կողմը, ապա անհրաժեշտ է հյուրանոցի ամրագրում

– հրավերի մեջ պետք է նշված լինի, թե ով է հոգում ծախսերը, եթե ծախսերը հոգում է դիմորդը, ապա անհրաժեշտ է նրա վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը

13. Գիտական, ակադեմիական, մշակութային կամ գեղարվեստական միջոցառումներին, ինչպես նաև համալսարանական և այլ փոխանակման ծրագրերին մասնակցող անձինք

– ընդունող կազմակերպության գրավոր հրավեր, որը հաստատում է, որ տվյալ անձը մասնակցում է միջոցառմանը

– հրավերի մեջ պետք է նշված լինեն կացության վայրի մասին մանրամասները. եթե այն չի տրամադրում հրավիրող կողմը, ապա պահանջվում է հյուրանոցի ամրագրում

– հրավերի մեջ պետք է նշված լինի, թե ով է հոգում ծախսերը, եթե ծախսերը հոգում է դիմորդը, ապա անհրաժեշտ է նրա վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը

14. Վարորդներ, ովքեր Հայաստանում գրանցված տրանսպորտային միջոցներով իրականացնում են միջազգային բեռնափոխադրումներ և ուղևորափոխադրումներ անդամ պետությունների տարածքում

– միջազգային ճանապարհային փոխադրումներով զբաղվող հայաստանյան ազգային ասոցիացիայի (միության) գրավոր նամակ, որում նշված կլինեն ուղևորությունների նպատակը, երթուղին, տևողությունը և հաճախականությունը

15. Քույր քաղաքների և այլ մունիցիպալ կազմակերպությունների կողմից կազմակերպված պաշտոնական փոխանակման ծրագրերի մասնակիցներ

– այդ քաղաքների վարչակազմի ղեկավարի/քաղաքապետի կամ քաղաքային իշխանությունների գրավոր հրավեր

– հրավերի մեջ պետք է նշված լինեն կացության վայրի մասին մանրամասները. եթե այն չի տրամադրում հրավիրող կողմը, ապա պահանջվում է հյուրանոցի ամրագրում:

– հրավերի մեջ պետք է նշված լինի, թե ով է հոգում ծախսերը, եթե ծախսերը հոգում է դիմորդը, ապա անհրաժեշտ է նրա վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը

16. Այցելություն զինվորական և քաղաքացիական գերեզմանատներ

– պաշտոնական փաստաթուղթ, որը հաստատում է գերեզմանի գոյությունը, և որ տվյալ անձին է վստահված գերեզմանի խնամքը, ինչպես նաև դիմորդի և թաղված անձի միջև ընտանեկան կամ այլ կապի առկայությունը